ՀՀ Արարատի և Վայոց Ձորի մարզերի
ընդհանուր իրավասության դատարանի
Եղեգնաձորի նստավայրի դատավոր
Ա. Պետրոսյանին

Բողոքաբեր՝
թիվ 91153414 քրեական գործով
տուժողի իրավահաջորդ Մուրադ Խաչատրյանի
ներկայացուցիչ Արթուր Ալբերտի Սաքունց
հասցե՝ Լոռու մարզ, ք. Վանաձոր, Տիգրան Մեծի 59

ԲՈՂՈՔԻ ԼՐԱՑՈՒՄ

Գրիշա Խաչատրյանի մահվան դեպքի առթիվ հարուցված թիվ 91153414 քրեական գործի նյութերին ծանոթանալուց հետո անհրաժեշտ ենք համարում բողոքի վերաբերյալ ներկայացնել լրացուցիչ հիմնավորումներ:

Այսպես, ինչպես նշվել է ներկայացված բողոքում՝ քրեական գործի նախաքննության ընթացքում չի հերքվել այլ անձի, մասնավորապես, թիվ 7 խրամաբջիջի դիտորդ Մարտուն Հարությունյանի կողմից Գրիշա Խաչատրյանին կյանքից զրկելու վարկածը: Հարկ է նկատել, որ դատաձգաբանական փորձաքննության եզրակացությամբ վերջինիս մարմնի տարբեր մասերից վերցված քսուկներում առկա են եղել պղնձի մետաղացման հետքեր, որը մտել է նաև կրակոցի արգասիքների մեջ: Ընդ որում, թիվ «19» մարտական հենակետի մյուս բոլոր զինծառայողների մոտ փորձաքննությամբ պղնձի մետաղացման հետքեր չեն հայտնաբերվել: Բացի այդ պետք է ընդգծել այն փաստը, որ Մ. Հարությունյանը դեպքից կարճ ժամանակ անց լվացվել է, մինչդեռ ըստ 2015 թվականի ապրիլի 8-ի լրացուցիչ դատաձգաբանական և դատաբժշկական համալիր փորձաքննության թիվ 03801503 եզրակացության՝ կրակոցի արգասիքները կրակող անձի ձեռքերին և դեմքին պահպանվում են մինչև կրակողի լվացվելը կամ այլ եղանակով հետք կրող մակերեսները մաքրելը: Մինչդեռ, վարույթն իրականացնող մարմինը, կայացրել է քրեական գործի վարույթը կարճելու մասին որոշում այն դեպքում, երբ քրեական գործի նյութերով միանշանակ չի հերքվել այլ անձի՝ Մ. Հարությունյանի կողմից Գ. Խաչատրյանին սպանելու վարկածը, մասնավորապես, գնահատական չի տրվել այն հարցին, թե լվացվելն ինչքանով կազդեր կրակոցի արգասիքի հետևանքներ հանդիսացող նյութերի քանակային հետևանքների վրա:

Գործի նյութերի ուսումնասիրությամբ պարզվել է, որ թիվ «19» մարտական հենակետի ավագ Վարդան Կիրակոսյանն ի սկզբանե որոշել է, որ Գ. Խաչատրյանն ինքն է իրեն «խփել», որի մասին հայտնել է Մ. Մարտիրոսյանին, այնուհետև գործով

հարցաքննված վկա Մովսես Մելիք-Թանգիյանն իր ցուցմունքում նշել է, որ զորամասի խոսակցություններից լսել է այն մասին, որ Գ. Խաչատրյանն ինքն է իրեն կրակել՝ խախտելով զենքի հետ վարվելու կանոնները: Այդ մասին, դեպքից անմիջապես հետո հայտարարել է նաև ՀՀ պաշտպանության նախարար Սեյրան Օհանյանը: Տվյալ դեպքում, հարց է ծագում, թե ինչն է հիմք հանդիսացել նման հետևություն կատարելու համար, այն դեպքում, երբ հենց դեպքի օրը հարուցվել է քրեական գործ՝ ՀՀ քրեական օրենսգրքի 104-րդ հոդվածի 1-ին մասի հատկանիշներով, քանզի վարույթն իրականացնող մարմնի համար առերևույթ առկա են եղել քրեական գործ հարուցելու առիթն ու հիմքերը:

Գործի նյութերի ուսումնասիրությունից պարզ դարձավ, որ վարույթն իրականացնող մարմինը, բավարարելով տուժողի իրավահաջորդի ներկայացուցչի կողմից ներկայացված միջնորդությունը, այդպես էլ չի պարզել, թե կոնկրետ երբ է Գ. Խաչատրյանի համագյուղացի, թիվ 58831 զորամասի զինծառայող Վազգեն Ավետիսյանը զորացրվել ՀՀ զինված ուժերից: Վարույթն իրականացնող մարմինը վերջինիս հարցաքննության ժամանակ հարց է ուղղել զորացրման օրվա մասին, որին ի պատասխան վկան հայտնել է, որ զորացրվել է իր զորակոչման օրը՝ հունիսի 21-ին: Սակայն, վարույթն իրականացնող մարմինը որևէ այլ միջոց չի ձեռնարկել Վ. Ավետիսյանի ցուցմունքով հայտնված տեղեկությունը ճշտելու համար:

Բացի այդ, քննիչը նախաքննությունն իրականացրել է դեպքի փաստական հանգամանքների պարզման, իրադրության վերականգնման ուղղությամբ, որոնք անմիջականորեն առնչվում են զենքի օգտագործման հանգամանքների բացահայտմանը, ինչպես Գ. Խաչատրյանի կողմից զենքի հետ անզգույշ վարվելու, այնպես էլ մեկ այլ անձի կողմից զենքի կիրառմանը: Եվ պետք է նշել, որ այդ ուղղությամբ արվել է բավական մանրակրկիտ քննություն: Սակայն, Գ. Խաչատրյանի մահվան հանգեցրած փաստական հանգամանքների թվում են թե՛ զումարտակում և թե՛ մարտական հերթապահության ընթացքում զինվորական կարգապահության, այդ թվում՝ մարտական հերթապահության կազմակերպման, զենքի հետ վարվելու անվտանգության կանոնների պահպանման և պատշաճ հրահանգավորման, այդ կանոնների իրազեկման և վերահսկողության հետ կապված խնդիրները:

Գործի նյութերից ակնհայտ երևում է, որ՝

1. Զինվորական կարգապահության վիճակը բարձիթողի վիճակում է եղել, մասնավորապես, գործով անցնող վկաների զինվորական համազգեստի անփույթ վիճակը (կոճակների բացակայություն, պատռվածքներ) հատկապես այն դեպքում, երբ թիվ «19» մարտական հենակետի ավագը և վերջինիս օգնականը հայտնում են, որ կոճակների բացակայությունը չեն նկատել: Բացի այդ, պետք է ընդգծել նաև այն, որ մարտական հերթապահության ժամանակ հստակ սահմանված չի եղել, թե որ զինվորը որ խրամաբջիջում պետք է հերթապահություն իրականացնի: Այդ հարցի լուծումը թողնվել է զինվորների հայեցողությանը: Ընդ որում, գործի նյութերից ակնհայտ է, որ մարտական հերթապահություն իրականացրած զինվորներից

շատերը նույնիսկ չեն հիշել, թե կոնկրետ որ խրամաբջջում են իրականացրել հերթապահությունը, ինչը նույնպես խոսում է կարգապահության ցածր մակարդակի մասին:

2. Մարտական հերթապահության կանոնների վերաբերյալ ՀՀ պաշտպանության նախարարի 155 գաղտնի հրամանով հստակ սահմանված է դեպքի վայրում որևէ փոփոխություն չկատարելու պարտականությունը, մինչդեռ գործի նյութերից երևում է, որ մարտական հերթապահություն իրականացնողները այդպես էլ հստակ չեն հիշում, թե ով և երբ է հրահանգավորել դեպքի վայրը պահպանելու մասին: Արդյունքում, այս հարցը նախաքննությամբ պարզված չէ: Ավելին, քրեական գործի նյութերից ակնհայտ է, որ այդ հրահանգավորումը կատարվել է միայն բանավոր և որևէ գրավոր ծանուցման ձևաչափ զորամասում գոյություն չունի: Իհարկե ՀՀ պաշտպանության նախարարի թիվ 155 հրամանի բովանդակությանը ծանոթ չենք, ուստի չենք կարող հստակ նշել՝ արդյոք այն պահանջում է գրավոր ծանուցում, արդյոք հրամանով սահմանված պահանջների պատշաճ կատարման նկատմամբ սահմանված է վերահսկողություն և ում կողմից է այն իրականացվում: Սակայն, այս հարցերն այդպես էլ քննությամբ չեն պարզաբանվել և պատշաճ գնահատականի չեն արժանացել:
3. Հստակ է, որ Արամայիս Գրիգորյանը կամ Վարդան Կիրակոսյանը անձամբ պետք է հերթափոխի հանձնում-ընդունումն իրականացնեին, որը Գ. Խաչատրյանի և Մ. Հարությունյանի վերջին հերթափոխի ընթացքում չի կատարվել: Ընդ որում, Գ. Խաչատրյանին մահվան հասցրած կրակահերթը հնչել է հեթափոխն ընդունելուց կարճ ժամանակ՝ մոտ 10 րոպե անց: Սա փաստում է, որ մարտական հերթապահության համապատասխան հրահանգավորումը չի արվել, ինչն առնվազն նշանակում է, որ Ա. Գրիգորյանը (ցերեկային ժամերին հերթափոխի հանձնում-ընդունումը կատարել է դիրքի ավագի օգնականը) պետք է հետևեր Գ. Խաչատրյանի կողմից հանդերձանքի և զենքի համար նախատեսված պահանջների պահպանմանը: Այս դեպքում, քրեական գործով ձեռք կբերվեին տվյալներ, թե երբ և ինչ պայմաններում է Գ. Խաչատրյանը հանել սաղավարտը և զրահաբաճկոնը, ու ինչպես է զենքը ապահովիչ ռեժիմից դրվել կրակահերթ ռեժիմի վրա:
4. Նախաքննության ընթացքում չի պարզվել, թե ինչն է պատճառը, որ Գ. Խաչատրյանի զենքն ապահովիչից իջեցվել է կրակահերթ ռեժիմի: Միայն Գ. Խաչատրյանի ինքնաձիգն է եղել ապահովիչից հանված վիճակում, թե թիվ «19» մարտական հենակետի մյուս զիվորների զենքերը նույնպես գտնվել են կրակահերթ ռեժիմի վրա: Սա թույլ կտար պարզել, թե արդյոք զենքի կանոնների պահպանման ուղղությամբ պատշաճ հրահանգավորում է կատարվում և արդյոք պատշաճ վերահսկողություն է իրականացվում պահանջների պահպանման նկատմամբ, որը նաև հնարավորություն կտա կանխել նման դժբախտ պատահարները: Այստեղ հարկ է ընդգծել, որ քննությամբ պարզվել է, որ հակառակորդի կողմից հարձակում ինչպես այդ օրը, այնպես էլ մարտական հերթապահության նախորդ օրերին չի եղել :

5. Քննությամբ պարզվել է, որ Մարտուն Հարությունյանի և Գրիշա Խաչատրյանի միջև վիճաբանություն է եղել: Դեպքի մասին հրամանատարները տեղյակ չեն եղել և անհատական աշխատանքների վերաբերյալ մատյանում որևէ գրառում չկա այդ դեպքի հետ կապված, այդ ուղղությամբ անհատական աշխատանքներ չեն տարվել: Սա նույնպես խոսում է զինվորական ծառայության կազմակերպման ցածր մակարդակի մասին, հակառակ դեպքում, պետք է հարց ծագեր՝ արդյոք նպատակահարմար է նրանց միևնույն մարտական հերթապահության մեջ ընդգրկելը:
6. Նախաքննությամբ Գրիշա Խաչատրյանի մարմնի վրա առկա այլ, ինքնաձիգից չառաջացած վնասվածքների առաջացման վերաբերյալ համոզիչ փաստարկներ չեն բերվել, ընդամենը ենթադրություն է այն մասին, որ դրանք կարող էին առաջանալ ընկնելու հետևանքով (ինչը տրվել է փորձագետների կողմից):

Բացի վերոգրյալները, հարկ ենք համարում ընդգծել նաև այն փաստը, որ նախաքննության ընթացքում չի պարզվել, թե արդյոք դեպքի առթիվ նշանակվել և իրականացվել է ծառայողական քննություն, կամ ինչու չի նշանակվել նման քննություն, որը պարտադիր է նմանատիպ դեպքերում: Ցանկանում ենք ևս մեկ կարևոր հանգամանք ընդգծել, գործի նյութերում վարույթն իրականացրած քննիչ Լ. Եղոյանի կողմից կազմված արձանագրությունները հիմնականում եղել են անընթեռնելի, հատկապես գործի համար կարևոր նշանակություն ունեցող այնպիսի քննչական գործողությունների արձանագրություններ, ինչպիսիք են դեպքի վայրի լրացուցիչ զննության արձանագրությունը, փորձագետների հարցաքննությունների արձանագրությունները, զորամասի հրամանատար Օհանյանի հարցաքննության արձանագրությունը:

Այսպիսով, կարող են պնդել, որ Գրիշա Խաչատրյանի մահվանը հանգեցնող հանգամանքների թվում էական նշանակություն է ունեցել թե՛ մարտական հերթապահության կանոնների պատշաճ ծանուցման, և թե՛ զինվորական կարգապահության ուղղությամբ ոչ պատշաճ հրահանգավորումը, ինչպես նաև զինվորական կարգապահության նկատմամբ ոչ պատասխանատու վերահսկողությունը, ինչի համար պատասխանատու են ոչ միայն անմիջական վերադասները, այլև՝ զորաասի վերադաս հրամանատարական անձնակազմը: Նշված հանգամանքների ուղղությամբ պատշաճ քննության չիրականացման պարագայում, չենք կարող համարել, որ իրականացվել է բազմակողմանի, օբյեկտիվ և լրիվ քննություն:

Բողոքաբեր՝ տուժողի իրավահաջորդ
Մուրադ Խաչատրյանի ներկայացուցիչ
Արթուր Սաքունց
28.09. 2015թ.